ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 31

ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.12.2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու թիվ 9 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Համայնքի 2017 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
2.Բարձրաշեն համայնքի 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանումը:
3.Համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի, համայնքապետարանի աշխատակազմի և <<Բարձրաշենի մանկապարտեզի/համայնքային ոչ առևտրային կազմակերպություն/>> աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատումը:
4.Համայնքի ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի ծնողական գումարի չափը սահմանելու մասին:
5.Համայնքի սեփականություն հանդիսացող Վազ 21214/նիվա/ մակնիշի ավտոմեքենան աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գինը սահմանելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԲԱԲԿԵՆ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՌՈՒՍՏՈՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 32-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Ելնելով անհրաժեշտությունից, համայնքի 2017 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.ֆոնդային բյուջեի 04.02.04.57 գործառնական դասակարգման 5112 հոդվածից 100.000դրամ պակասեցնել , ավելացնելով 06.04.01.51 գործառնական դասակարգման 5122 հոդվածին մշակույթի տան համար գույք գնելու.

2.06.04.01.51 գործառնական դասակարգման 5112 հոդվածից պակասեցնել 545.000 դրամ, որից 445.000դրամ ավելացնել 04.05.01.59 գործառնական դասակարգման 5112 հոդվածին՝ ճանապարհների վերանորոգման աշխատանքների համար,իսկ 100.000դրամ՝ 08.01.01.52 գործառնական դասակարգման 5122 հոդվածին հանգստի սրահի համար գույք գնելու.

3.վարչական բյուջեի 01.01.01.51 գործառնական դասակարգման 4111 հոդվածից պակասեցնել 770.000դրամ ավելացնելով նույն գործառնական դասակարգման 4112 հոդվածին տարեվերջյան հաշվարկները ճշտելու համար.

4.01.01.01.51 գործառնական դասակարգման 4213 հոդվածից պակասեցնել 5000դրամ ավելացնելով նույն գործառնական դասակարգման 4234 հոդվածին թերթում հայտարարություն տալու մասին.

5.10.07.01.55 գործառնական դասակարգման 4819 հոդվածից 23.000դրամ պակասեցնել ավելացնելով 01.01.01.51 գործառնական դասակարգման 4212 հոդվածին էլեկտրաէներգիայի ծախսերի համար.

6.05.02.01.55 գործառնական դասակարգման 4213 հոդվածից 42.000դրամ պակասեցնել ավելացնելով 01.01.01.51 գործառնական դասակարգման 4212 հոդվածին էլեկտրաէներգիայի ծախսերի համար.

7.48.01.00.51 գործառնական դասակարգման եկամտային մասից պակասեցնել 31.550դրամ և նույն չափով պակասեցնել ծախսային մասի 01.06.01.60 գործառնական դասակարգման 4241 հոդվածից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԲԱԲԿԵՆ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՈՒԳԱՐ
5. ՌՈՒՍՏՈՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 33-Ն

ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> օրենքի 14-րդ և 15-րդ հոդվածներով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Բարձրաշեն համայնքում սահմանել 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԲԱԲԿԵՆ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՌՈՒՍՏՈՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ *04200478*

Հավելված 1
Բարձրաշեն համայնքի ավագանու
08-ը դեկտեմբերի 2017թ.
թիվ 33-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչ և 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15.000 դրամ.

բ. սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30.000 դրամ.
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50.000 դրամ.
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50.000 դրամ.
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 100.000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3.000 դրամ.
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5.000 դրամ.

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3.000 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին

ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի՝ 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5.000 դրամ:

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200.000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100.000 դրամ.

6)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամյակի համար՝

- մինչև 26քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 9.000 դրամ.
- 26-ից մինչև 50քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12.000 դրամ.
- 50-ից մինչև 100քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 17.000 դրամ.
- 100-ից մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23.000 դրամ.
- 200 -ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 40.000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 80.000 դրամ:

բ. ծխախոտի արտադրանք վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամյակի համար՝

- մինչ 26քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 9.000 դրամ,
- 26-ից մինչև 50քմ.ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12.000 դրամ,
- 50-ից մինչև 100քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 17.000 դրամ,
- 100-ից մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23.000 դրամ,
- 200-ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 40.000 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 80.000 դրամ:

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350դրամ՝

մեկ քառակուսի մետրի համար.

8) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.000 դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.000 դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20.000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30.000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50.000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.000դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից 2.000 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.000 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25.000 դրամ.

9) ավազանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2.000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3.500 դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1.500 դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

10) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10.000 դրամ.

Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ, իսկ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ, կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0.3 գործակցի կիրառմամբ:

Տեղական վճարներ

1) համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո, շենքերի և շինությունների/ այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը , ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1.000 դրամ.

2) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 1000 դրամ.

3) Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր բնակչի համար ամսական 50 դրամ,

Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 1.500 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար 4. 000 դրամ

իսկ համայնքում

4).իրավաբանական անձանց աղբահանության վճարի չափ սահմանել յուրաքանչյուր ամսվա համար հետևյալ սակագներով՝

ա.առևտրի/այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցողների համար - 25դրամ/1քառ.մ./.

բ.արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար - 5դրամ/1քմ/.

գ.կրթական, մշակույթային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների համար - 2դրամ/1քառ.մ./

Աշխատակազմի քարտուղար՝ Ն.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 34-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ <<ԲԱՐՁՐԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>>-Ի/ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ/ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել 2018 թվականի համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը, աշխատակազմի և <<Բարձրաշենի մանկապարտեզ>> -ի/համայնքային ոչ առևտրային կազմակերպություն/ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 և 2 հավելվածների:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԲԱԲԿԵՆ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՈՈՒՍՏՈՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված 1
Բարձրաշեն համայնքի ավագանու
«08 » «դեկտեմբերի» 2017թվականի
թիվ 34 -Ն որոշման

ԲԱՐՁՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը - 12
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	2018թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար		260.000
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	140.000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	170.000
Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	141.000
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	140.000
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	111.000
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	110.000
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
Գեղմասվար	1	85.000
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Պահակ	1	80.000
Հավաքարար	1	75.000
Բանվոր	1	80.000
Վարորդ	1	75.000
Ընդամենը	12	1433.000

Աշխատակազմի քարտուղար՝ Ն.Մարգարյան

Հավելված 2

Բարձրաշեն համայնքի ավագանու

«08» դեկտեմբերի 2017թվականի

թիվ 34 - Ն որոշման

ԲԱՐՁՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ <<Բարձրաշենի մանկապարտեզ>>/համայնքային ոչ առևտրային կազմակերպություն/

1. Աշխատակիցների թվաքանակը - 10

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	*2017թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (<< դրամ)*
Վարիչ	1	137.000
Դաստիարակ	2	160.000
Դայակ	1	72.800
Խոհարար	1	72.800
Հաշվապահ	0.5	72.800
Պահակ	1	72.800
Երաժշտության դաստիարակ	0.5	72.800
Լվացքարար	0.75	72.800
Բուժ - քույր	0.5	72.800
Ընդամենը	10	806.600

Աշխատակազմի քարտուղար՝ Ն.Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 35-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Համայնքի ոչ. առևտրային կազմակերպության 2018 թվականի ծնողական գումարի չափը սահմանել 5000/հինգ հազար/դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԲԱԲԿԵՆ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՌՈՒՍՏՈՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԲԱՐՁՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *04200478*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 36-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱԶ 21214(ՆԻՎԱ) ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել համայնքի ղեկավարին, աճուրդային կարգով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող Վազ 21214(նիվա) մակնիշի ավտոմեքենան:
2.Օտարվող ավտոմեքենայի գինը սահմանել 550.000դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԲԱԲԿԵՆ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՌՈՒՍՏՈՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ *04200478*